

Rev. Père G. Kalémkarian Mechitaristeng
M 4 Vienna

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱԳԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՅԻՆ

Պոլիարիոյ համար Տարեկան 12 դր.
 » » Վեցամսեայ 6 դր.
 Արտասահմանի համար (երկու թիւը մեկ
 ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 դր.
 ԿԱՆՈՒԿ ԿԼԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռալիս դրկել հետեւեալ հաճեալ

ԽՈՐՀԱՊԵՐՈՒԹՅՈՒՆ « ԻՐԱՆԻՆԷՔ » ԼՐԱԳՐՈՅ. — Վ. Ա. Ն. Ա. (Պուլկարիս)

Редакция на вѣстникъ

“И р а в у н к ъ”

ВАРНА (България)

Rédaction du journal

„I r a v o u n k“

V A R N A (Bulgarie)

հոնքագրութեան ուղղեալ գրութիւն
եւ յեն դրկուիր եւ յարմար դասաւ-
նէրը միայն կը հրատարակուին աւ.
բողոքովն կամ մասաւմ:

Իրանուցիական տղերք 20 սանձիւ. երե-
փեկ աւելի անգամնեհրո հաւաւ 20 0/0
գեղջ կր շինի:

ՀԱՅԱԹԱԳԱՀԻ ԿԵ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆԵՐՐ

Քողովական յարանուստից
տակ Կարփակուղ շատ մը ակա-
նիքու (յուսերական, կալուի-
կան, մկրտչական, երիցական, ե-
պիսկոպոսական են. են.) մի ներ-
կայացուցիչը, Շաբաթապահ մը,
առիթ ունեցած է վառնա հաս-
նելու և իր հաւատալիքները հոն
յուրթեան պարզելու. հակառակ
բողքօրականաց մեծամասնութեան
պատկերներու (կրօնական) կարի-
ւորութիւն չընծայելուն, մեր Շա-
բաթական պատուելին պատկերնե-
րով կը խօսի և անոնցմով կը բա-
ցատէ իր քարոզութիւնները, ու
տեսութիւնները կը պարզէ:

ինչպէս կենդանական և բուսական ուշխարհը, նմաններ առաջացնելու, տեսակներ շատցնելու փանադիր է, այնպէս ալ բողոքականութիւնը երթալով ճիւղաւորելու և մինչեւ իրար չհասկնալու չափ յառաջանալու վրայ է. որովհետեւ ամինքն ալ առանց կրօնի խտրութեան բաներնին գործերնին թողած, Աւետարանի կամ Աստուծաշունչի մէն մի խօսքը խործնելու, պէս պէս մեկնութիւններ տալու և ըստ կամս մեկնելու հետամուտ են, և պատրաստ են ամեն զոհողութիւն յանձն առնելու իրենց համողման պաշտպանութեան համար: Մինք չպիտի վարմանա. յինք եթէ միջին դարու մէջ գըտնուէինք. բայց այս 19րդ դարու վերջին շրջանին մէջ, երբ գիտութիւններ ու արհեստներ հսկայ քայլեր կառնեն, երբ ամեն արտադրք երեւոյթներ գիտութեան միջոցաւ կը մեկնուին, հլիլ կեդծիքնիրու վրայ ճառել ու ժողովրդեան դիւրահաւանութիւնը շահագործելու աշխատիլ. չեմ գիտեր ի՞նչ գրելու և ի՞նչ անուն տալու է ասոր:

Երկուշաբթի՝ հրեկոյ պատահ.
մամբ ունինդիր եղանք, այգ շա-
բաթ ապահ պատուելիին, որ փոխա-
նակ կիրակիի՝ շաբաթը սուրբ կը
պահէ, և կարգ մը արտառուց գա-
ղափարներ կը պաշտպանէ. խօսե-
լու միջոցին շարունակ եղած հար.

ցապէս գումարեալն պատահաւ, ո.
րոնք շատ անգամ քարոզիչը իր
պաշտպանած նիւթէն կը հեռա-
ցէին, կարելի չեղաւ իր հաւատա-
լիքներուն վրայ որոշ գաղափար մը
կազմել. բայց չենք կրնար մեր
զարմանքն չլայտնել նոյն իսկ իր
խօսածներուն վրայ, որոնց բոլորն
ալ ենթադրութեանց վրայ հիմ-
նուած էին, առնելով Աւետարանի
Յայտնութիւններէն:

Հաս իր տեսութեան Աւետարանը
նի յայտնութեանց մէջ նկարագրե-
ուած մարդը, որուն գլուխը ոսկիէ,
կուրծքը, արծաթէ են, ևն, ևն,
էին՝ կը ներկայացնեն չորս հատ
թագաւորութիւններ որոնք եկած
և գացած են . աշխարհի վերջը
հասած ըլլալու նշանները՝ աստղե-
րու վար թափիլը արդէն տեղի
ունեցած է ասկէ երեսուն թէ քա-
ռասուն տարիներ առաջ, որուն
վկաներն իսկ կան եղբր և դեռ
կենդանի են, ևն, ևն, . Հետեւե-
լար ժոռեցած է աշխարհի վերջը
և Քրիստոսի կրկին անգամ աշ-
խարհ գալը, այս ժոռակայ տա-
րիներուն մէջ, որուն համար մեր
պատրաստութիւնները տեսնելու
ենք :

Մենք արժան չենք համարեր, Սեւտարանով և գիտական զորաւոր փառքերով ջրել, այդ դարաւ վերջիկ պատուելիին սահմանափակ և սնամէջ կրօնական հաւատալիքները, որոնք համար գրիչ չարժեքիսկ չարժեք . միայն կը փութանք հրապարակաւ մեր զգոգհանքն յայտնելու այն կարգ մը կրօնական կուսակցութեանք պիտերունդէմ, որոնք այսպէս չարունակաւ կան վեճերու ու պայքարներու մէջ կը փնտռեն իրենց շահը . նորանոր վարդապետութիւններով վարկաբեկ կընեն ինքզինքին, և նոյն իսկ կրօնքնին ու ժողովրդեան սնահաւատութիւնը կը զօրացնեն :

Յաւել տանցած, հեռացած են
մեզնէ շովին կրօնականութեան
դարաշրջանները, և պատուելին ի
զուր ճիգեր պիտի ընէ, նոր վար-
դապետութեան մը սերմերը ցան-
լու հայ ժէզովդեան մէջ ալ, վար-
դապետութիւն մը, որ հիւլէի յափ-

արժէք չունի, և միմիայն պարզ
անհատներու ազդեցութիւնը չա-
հագործելու կը ծառայէ :

Արդեօք լաւ չէ՞ր ըլլար որ մեր
Շարաթական պատուելին և բոլոր
իւր նմաներն, փոխանակ ուղեղ ու
բերան յողնեցնելու ժամերով, աշ-
խարհի վերջը և Քրիստոսի գա-
լուստը յօտ կամ հեռու ըլլալը
հաստատել ջանալու, քիչ մը ան-
դարդաւոնային ազգի ներկայ վի-
ճակին վրայ, իրենք ալ խորհէին
գործէին, որպէս հայ, և բարի
քրիստոնեայ, ազգի տառապանք-
ները թեթեւցնելու միջոցներուն
վրայ, և ատով կատարած կըլլա-
յին մարգարավայել գործ մը, գոնէ
քրիստոսի սիրոյն համար, որ ըստ
իրենց ասութեան, մեղէն շատեր
քիչ ատենէն զայն անսնելու բաղ-
դին պիտի արժանանան :

ինչպես երբեմն Յոյները, ի-
րենց անկման ժամանակ, մենք ալ
չատ զբաղեցանք կրօնական խըն-
դիրներով ու գործերով, նոյն իսկ
ազգին ամենատաճնապալից վայր-
կեաններուն, ինչպէս հիմա. գոնէ
օգտուինք անցիալէն և ժամավա-
ճառ չըլլանք:

Մեր պարտականութիւնն է գո-
նէ ժողովուրդը զգուշացնել զառ-
նազգեստ գայլերէ, որոնք հացի
ի խնդիր, ամեն գոյնի և տարազի
մէջ կը ժամեն և կ'աշխատին չա-
հապարձել ժողովրդեան բարի տը-
րտագործութիւնները և պարզամը-
տութիւնը :

Չրքմոյիկ Հոշր

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Յառաջիկայ կերակի. Յուլիս
25ին, հանդիսաւոր Ս. Պատարագ
պիտի մատուցուի քաղաքիս Ս
Սարգիս եկեղեցւոյ մէջ Ողբաց
եալ Օր. Ֆրայլէրի հոգւոյն հա
մար :

Արդ ներկայիւս կը խնդրենք
Արդոյ հասարակութենէն որ բա-
րեհաճին նոյն օրուան մատուցուե-
լիք Ս. Պատարագին ներկայ գլըտ
նուի :

Իզիմայ Թադ. Խորհրդայ
Վ. Ատենապարի Վ. Ատենապետ
Գ. Կիլիպետեր Բ. Մ. Թովմասեն
23 յուլիս 99
Վառնա

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօֆիա, 19 յուլիս 99

[illegible]

Ներկայ էին նախարարք, հիւպատոս-
ապահ մարմինը, գլխավորական եւ
քաղաքային բարձրատիճան պաշտօն,
եւայք, խուռն բազմութիւն ներքը եւ
դուրք, իշխանը բաց սկայ կը գտնուի
արդէն երկրէս:

Այսպէս արտաքին սուգը կը վերնայ,
սակայն ներքինը շատ շուտ չպիտի
վերնայ զգայուն եւ հասկցող պոլիկա-
րէն, քի իշխանութին իր ընտիր ձիւ-
քերով, վարքով ու լսարքով մանա-
ւանդ աղպար բարոյականութեամբ ժո-
ղովրդեան ամէն զատակարարին ալ կը
բարկէր ու կը յարգուէր, քի անակըն-
կալ մահն ալ կ'արծիս տալէլ զօրացուց-
այն համակրութիւն եւ յարգանք:

Շատ կը պարտի սնոր պուկարը, Պաշափն մէջ կարգ ու կանոն եւ խընայողութիւն չա հաստատեց: Նա սողի ընդհանր յարգել յարոշականը եւ երեւոյթ անհարոշականին, իր օրով չէ յիշողունած ըստ պաշափնի սրահին մէջ օր եւ է մի կին, որուն անցեալին կամ ներկային վրայ կնոջ համեստութեան զէմ ամենադողը կասկած մը չուննար: Իր պարզապիտութեամբ օրինակ եղաւ պահեստէր եւ շտալ պուկարութիւն, որ պարզապիտական հանդիմանք մէջ կարծես մին քան զմիտս կը մտցնէ արդի պարզով պահուած

Սրբոխանաւ Ուշիշէրի-Լուրդա Մա-
րիա պիտի մնայ իր գործոց գլուխը,
որ պիտի արուեստի օրիորդ լի մանու-
նացանք, կը սովոր տնասէր մօր մը վե-
րաբերեալ ամէն ինչ, ձեւեր, կտորեւ,
կարեւը եւ որ զօրեղի ինչպէս ինչպէս
թիւաբ համով հօտով կերակուր եփել

Հանդէս մ'ալ մենք ունեցանք անց-
եալ կիրակի ազգային շրջանին մէջ. ե-
թէ կարելի է այսպէս ըսել, նորոր
կիրակին էր այդ, որ մեր զարոյց
ըննուիւն ու տարիկան հանդէսը սի-
անդամայն տողի ունեցաւ Լուքսէմ-
պուրի ճեղքած օթէլին թատերաբեմին
վրայ կ'ընդկայող իմեան հայ եւ պոլ կ'ալ
հետաքրքրինքնու.

Զտահնուած ու չլուած բան, նոր
սովորութիւն. միայն կիրակի օրի
քննութիւն տալ, արդեօք անոր հա-
մար որ ունկնդիրներ գտնուէ՞ն, թէ
քաղուածի ժամանակ չատ ունենալոյն
դպրոցականք. բայց այս չէ վրան ծան

բանալիք կէտը. այդ մասին կրնամ հաշտուիլ. այլ է խնդիրը. այդ վերջին քննութիւնը եւ հանդէս օթէլի մը թատերաբեմին իրաւ տեղի ունեցաւ. ինչո՞ւ արդեօք առաջին երկու կիրակիներ զպրոցին մէջ եւ այս դուրսը. նե՞ղ կուգար դպրոցը. չունինք աւելի ընդարձակ եկեղեցի մը, զոր սովորութիւն ունինք նման պարագաներու մէջ գործածել. չունինք եւ գաւիթ մը, ուր հարիւրաւորներ կրնան սեղմուիլ:

Բայց շուտ հասկցուեցաւ գաղտնիքը, այո՛ւ, շատ շուտ եւ նոյն իսկ այդ հանդիսին:

Տիկին Վարժուհին իր տեղեկագրին մէջ շատ յախուռն եւ չիտակն ըսելով վարժուհիի մը, կնոջ մը անվայել լեզուով պրոպագանդայի թէ թաղ-հոգաբարձուն (՝) դպրոցին ո՛չ ծրագիր տրուած է երկու տարիէ ի վեր եւ ոչ ալ կարգ ու կանոն. ինծի այնպէս եկաւ որ տիկինը չպիտի կրնար գործածել այս լեզուն ազգային հաստատութեան մը մէջ (նորէն ասպի մտածել է, պրոպագանդա՞), ասոր համար ալ շատ լաւ եւ յարմար էր օթէլին թատերաբեմը. ուրկէ միայն կարելի էր այդպիսի անվայել արտայայտութիւններ ընել օտարին առաջ իսկ:

Իսկ թէ ճիշդ ե՞ն իր ըսածները, գործին տեղեկ հայր բնաւ չկրնար հաւատալ: Մենք խիստ ի մօտոյ գիտենք, որ մեր թաղական-հոգաբարձուն շատ անգամ այցելած է դպրոցը, շատ դիտողութիւններ ըրած է իր ընթացից, ծրագրի եւ կարգ ու կանոնի համար, սակայն տիկին վարժուհին միշտ մերժած է եւ չէ ուզած լսել իսկ իրեն յատուկ յանձնապատասխանութեամբ: Այո թաղ-հոգաբարձուն ունի մեծ պակասութիւն մը, որուն վրայ դժբաղդաբար մեր վարժուհին գիտակցութիւն իսկ չունի, եւ գիտէ՞ք, ազնիւ ընթերցողներ, ի՞նչ է այս պակասութիւնը:

Միւր վարժուհին կիսն է Տիար Թ. Ունճեանին, եղբայր Պուրկազի հոնրածանօթ Ունճեանին. անցեալ տարի ձախող պարագայից բերմամբ, էրիկը միանգամ ասորին անդին գնաց գործով 15-20 օրի չափ, ինք խանութ պանու-թիւն ըրաւ երեսի վրայ ձգելով զբարոցը. անգամ մըն ալ նոյն խանութի գործին համար ինք վարժուհին Ռուս-ճուք գնաց օրերով, դարձեալ երիսի վրայ թողնով դպրոցը, բայց ամսականներն ալ ամբողջովին ստացաւ:

Ալ ընթերցողը թո՛ղ ինք խորհի թէ այսպիսի բազմազգ վարժուհի մը երբ այսպէս արձակ համարձակ ազգ. մարմին մը, որ իր պաշտպանն եղած է միշտ, օտարին առջեւ դատաւիտելու խիղճ չընտր. ի՞նչ անուն տանք իրեն. եւ մենք տակաւին կըստանանք, որ հայ մանկաւորն այսպիսիներէն բարոյականութիւն սովորի. խեղճ ժողովուրդ, ո՞րչափ ինկած ենք:

Սակայն այսուհանդերձ վարժուհին ինքն ալ ունի իրաւունք այնպէս վարուելու. զի ինչպէս շատեր ինք ալ լըսած էր եւ գիտէր, որ առաջիկայ տա-

(*) Այս տեղ գործ շատ չկենալուն զատ զատ թաղ. եւ հոգաբարձու չունինք. միեւնոյն մարմինն է, որ կը նայի թէ դպրոցը եւ թէ եկեղեցին. թաղականութեան համար կը վաւերացուի պատ-րիարքարանէն, հոգաբարձութեան համար տեղական կառավարութիւնէն: Վերջին դէպքերուն վրայ հրաժարեալ է կամ հրաժարական տուած է թաղականութիւնը, բայց կը մնան հոգաբարձու. տեսնենք ի՞նչպէս պիտի լուծուի այս խնդիրն ալ. անկից ալ պիտի հրաժարին թէ երկու մարմին պիտի ունենանք. կը խօսինք եւ կը գրենք:

Իրն այլ եւս չպիտի վարձուի, պիտի հրաժարեցուցուէր. ժողովրդեան քիչ թէ շատ այդի յուզեալ վիճակէն օգտիլ ուզելով, մանաւանդ թաղականի հրաժարականն ալ ինկատի ունենալով մանկիփեսք մէր ըրաւ ժողովուրդը գրգռելու իր պաշտպան հրաժարեալ թաղականին դէմ, որ եթէ երբէք նոր ընտրութիւն լինի, ընտրուին ուրիշներ (որուն մէջ է եւ իր էրիկը), որ պէսզի եկող տարի եւս պաշտօնի վրայ կարենայ մնալ. քանի որ մանաւանդ թէ այժմ քան իրբէք պէտք ունի այդ պաշտօնին:

Բայց մենք վստահ ենք, որ ժողովուրդը ինչ ալ որ լինի, որչափ ալ յուզեալ, գիտէ ընելիքը եւ միայն վարժուհիին ըրածը պիտի մնայ միայն. ի նախատինս իրեն եւ իր բարեկամաց: (*) Ա.

Սիլիւստի, 19 յուլիս 99

Երէկ եկեղեցիի աւարտումէն հաջորդական վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Լուսաւորչեան երկսեռ սաներու վիճակացոյց-մրցանակաբաշխի հանդէսը: Երգուեցաւ երգեր, արտասանուեցան ազգային ոտանաւորներ եւ ճառեր: Ուսուցչիչ եւ ուսուցչուհի ներկայացուցին հանդիսականներու 98-99ի տեղեկագիրը:

Իրաւ որ կ'զգուշանայի դպրոցի եւ ուսուցչական մարմնի չորսը դառնալէ եթէ ստիպատական կտրուի եւ հետեւողութիւն հանդիսներու ծաղրելի չաղ-փաղփանքէն վիրաւորուի պէտք ըլլաւ: Այս երթագրութեան կառավարողն էր Գրիգոր յունիս 30 թուականաւ գրած թղթակցութեան գէմ՝ Շարժումը մէջ քաղաքիս մի ինչ որ Վ. Տ. ի գրած քանի մը տողերը: Միտք չունիմ խնդրին անձնական չուկայի վէճի կերպարանք տալ եւ չարք մը փտած պատուելիական յորջորջումներէն զայրացած ընդդիմաբանս անցեալը պրպտելու, որովհետեւ նպատակս այդ չէ, այլ քաղաքիս կրթական կեանքը ներկայացնել եւ անոր օգտակար ըլլալ. ես յունիս 31) թուական գրած ատեն չեմ ուզած ընդունիլ որ հոս Վ. Տ. մը կայ, որ կուզէ ինծի շատ տեսնալ տեղական մամուլին մէջ ու եւ է գաղափար յայտնելու, Վ. Տ. մը որ արտառոց ճկունութեամբ կեղծաբանեալ որ այս տողերը գրողը իր ունեցած չորստկորին աչք ունի. զիս մօտէն ճանչցողները եւ նոյն իսկ այդ Վ. Տ. գիտեն որ այդ աստիճան տափակ նկատուելու ձախորդութեան մէջ չեմ ինկած:

Մեր հրապարակագրական համեստ գործունէութեան մէջ մեր թելադրիչներն պիտի ըլլան կորակոր անաչառութիւն եւ անկեղծութիւն: Կը յուսամ որ այսքանը բաւական լըլլայ հացը կորսնցնելու երկիւղով սահմակած Վ. Տ.ը հանդարտեցնելու եւ զիս անհամ խնդրով մը զբաղեցնելու ճանձրոյթէն ազատելու համար:

Շարժում օր հանրագրութիւն մը պատրաստուելով 35-40 ազգայիններու ըստորագրութեամբ տեղիս քահանային ղրկուեցաւ, Օրմանեան պատրիարքի յիշատակութիւնը պատարագին մէջ դադրեցնելու համար. ինչպէս ձեզ հետադարձեալ, երիկ անոր յիշատակութիւնը տեղի չունեցաւ:

Երիտասարդ պահպանողականի մը ցնդած տեսութեամբ պէտք չէ եղեր ելլել Օրմանի դէմ այդ տեսակ քայլ մը առնել քանի որ «Պատրիարքին նպատակ»

(*) Տեղական օրէնքը չը ներքեր, որ կեղեկփառ ամուսնացեալ, պսակի ու երկան տէր տիկիններ վարժուհի լինին պատճառը պարզ է. գիտնանք օգտիլ եւ ինկատի առնենք այս՝ որ մի գուցէ ապագային ալ այս մասին խնդիրներ ունենանք:

կը հահահուծեան վեխաժողովի նահապետին այդ տեսակ խեղաթիւր մը տալով հիստ կտրուկ քահակալանութեամբ իւր Սուլթանի աչքին թող փչել կը նշանակէն եղեր:—Վա՛յ ձեզ գորտեր: Ծ. Կ.

ԻՐԱՒՈՒՆՔ ԹԷ ԶՐԱՐՏՈՒԹԻՒՆ

Կը խնդրեմ Տէր խմբագիր հաճեցէ՛ք թերթերնուդ մէջ անկիւն մը շնորհել իմ հետեւեալ երկտողին որ անկողնակալ սրտի մը արտայայտութիւնն է:

Կարդացի ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԵՍՈՎԵՐ նագրով մէկ խմբագրականինդ, որուն մէջ մեր վարժապետներու համար գրեթէ մոլոր թեան կարգ անցած ինքնագովութիւնը, ինչպէս նաեւ ասոնց իրենց (նախորդներուն դէմ) ըրած անուանարկիչ յարձակումները մատնանիչ ընելէ յետոյ, խօսքերնիդ մանաւորած էիք Պ. Շահրիմանի նկատմամբ, անոր ալ վերոյիշեալ թերթութեան մէջ ունեցած բաժինը կէտ առ կէտ բացատրելով:

Մենք յանուն արգարութեան կուգանք խոստովանիլ որ ձեր ըրած դիտողութիւնները իր ամեն պարագաներով իրաւացի գտնիլէ զատ, անոնց մէջ պարկեշտութեան եւ համեստութեան սահմանէն դուրս բան մը չկրցանք նշմարել:

Ես, իմ կարգիս, կրեմ թէ՛ ո՛չ միայն Պ. Շահրիման սնուզողի կերպով անմիջապէս զինքը կանխող ուսուցչական մարմնին դէմ խօսած էր, այլ իր ըսածներով կուզէր հաստատել թէ մինչեւ իր վարժարաններու մէջ ոտք դնելը, Վաճանի չի գիտցուի ի՞նչ պատճառներով, օրինաւոր դատարարական երես տեսած չունէր: Այս ըսածիս տարակոյս կը մնայ դեռ. Պ. Շահրիման կուզէ՞ որ իր այս խոստովանութիւնը հաստատուի համար դեռ մեծ ճիգեր թափուին: Ինք էր որ կ'ըսէր թէ աշակերտները երկու անգամ երկու չորս ընելը, Հայկ նահապետին ո՛վ ըլլալը չէին գիտեր. ինքն էր պոռացողը որ վարժարանի իրեն յանձնուած էր պարագայէս քոսային վիճակի մը մէջ: Ենդ է ուրեմն հոս յիշել մեզ որ մեր մէկ կողմէն Պ. Շահրիման գործը այս կերպով կը նկարագրէր, միւս կողմէն անցեալ տարի նախորդ տնօրէն Պ. Միքայէլեան իր ըրած խիստ փայլուն ատենախօսութեան մէջ աշակերտներուն բացատրիկ յաջողութիւնը հետեւեալ բառերով բացատրած էր:

«Ունեցանք մեր ծրագրին երեք տարիներուն համապատասխանող երեք «դասարաններ. որոնց կազմութեան համար ուսուցչական մարմնին ըրած «ջանքերը գրեթէ յաջողութեամբ պատկուեցան»:

«Այսօր յոյժ նրբին աշխատութիւն մը «մնացած է աշխատութիւն մը՝ որ սակայն ոչինչ ունի յսկեցուցիչ»:

«Մեր հրապարակաւ եղած քննութիւնները բաւական ջանքախիչ ապացոյցներ էին այն համոզումը գոյա-«ցնելու թէ՛ աշխատութիւնը միայն «կրնար գոհացուցիչ վիճակի մը յայն-«գեցնել ձեր սրամիտ զաւակները, ու-«որոնցմով ես հպարտ եմ այսօր»:

Ուրեմն նախորդ տնօրէնին այս բացատրութիւնները որքան հեռի են Պ. Շահրիմանի ցոյց տուած քոսային վիճակէն. դատողութիւնը ընթերցողին կը թողուք:

Աւելի լաւ ըրած չէ՞ր ըլլար Պ. Շահրիման երբ պարզ կերպով նախորդ ու այս տարուան քննութեանց տեղեկագիրներուն իրական տարբերութիւնը հանրութեան բացատրէր:

Ամօթ է, մեծ ամօթ, մարդու մը

այսքան առաջ երթալը ինքնագովութեան մէջ:

Նոյնպէս մեր երկսեռ վարժարաններու վերոգրեալ ողորմելի կացութիւնը թէեւ Պ. Շահրիման ներկայ հոգաբարձութեան չէր վերագրած, սակայն կըրնա՞նք չի խոստովանիլ որ մեր վարժարաններու յետադիմութեան մասին (եթէ երբէք ստոյգ է) նախկին հոգաբարձուներու հետ համահաւասար պատասխանատու պէտք է լին նկատուիլ նաեւ ներկաները, նաեւ ամբողջ Վաճանացիք, որոնք Ազգ. պաշտօնական մարմնոյ մը ընտրութեան մէջ միակ իրաւունքը կը վայելն:

Ճիշդ է ուրեմն որ Պ. Շահրիման իր րասածները ժողովրդին կլիցնել տալով զանոնք հողին հաւասար ստորնացուցած եղաւ ասով՝ անիկայ ճշմարտութեան բոլորովին անտեղեկ մարդոց մէջ ալ անարժան ծափեր կորած եղաւ: Ի՞նչ բան է որ երբ մեր վարժապետներու գործին գայ ժողովուրդը, երբ զիրենք ծափահարէ, ամեն բանի ընդունակ ու ուշիւ՝ կը նկատուի, հակառակ պարագային իր յետին ծայր տխմարներ գետնէ գետին զարնուելու պայմանաւ:

Հիմա կը հարցնենք մենք Պ. Շահրիմանին. ի՞նչ ըրիր պարո՞ն. հրաժեղ գործերը, առաջ մեր զաւակները այր ու շեմը չէին ճանչնար. իսկ հիմա քու շնորհիւք քերթուածներ կը յօրինեն մէկ տարուան մէջ, չէնէ մի քու խելքդ անոնց գլխուն մէջ թափեցիր. եթէ այսպէս է կը շնորհաւորենք ձեր առաջիմութիւնը. Սատուած վարձատրէ զձեզ. յաջողութիւն գալիք տարուան: Սակայն ուրիշ ատիւ թողէք կը խնդրեմ որպէսզի ձեր յառաջիմութեան վրայ ուրիշներ գովեցան չտալեն. թերեւ նիւրեկ ինձ ըսել որ պարծենա՞նք, բայց ոչ միայն Շարժումի խմբագրութիւնը:

Տիրաւ Միկսաէլեան

ՈՐՈՒՆ Ե ԱՄՕԹԸ

Պ. Շահրիմանի Շարժումի միջոցաւ Ձեր «վարժապետական ես» ին դէմ գրածները զիս շատ դժգոհ ու ամօթահար թողուցին: Պահ մը մտածել սկսայ թէ՛ աւտոնք ի՞նչ տեսակ սրտէ մը կըրնային բղխիլ կամ ո՞րքան աւտոտ լեզու մը կրնար այդ ձեւով խօսիլ. որո՞ւ գրածներն էին ատոնք մարդուն զաւկի, թէ տարբեր արարածի մը: Ու յետոյ սկսայ մեղք ըսել ներսէս, մեղք որ մեր մանկտին այսպէս անկեալ բարոյակա. նի տէր ուսուցիչէ մը պարտէին ընդօրինակուիլ:

Պ. Շահրիման երբ կուզէր ինքնապաշտպանութեան դիմել Ձեր իր դէմ ըսածները մի առմի ջրեւով, արդեօք չէր կրնար պարկեշտութեան սահմանէն դուրս չենել, փոխանակ բերանը աւրելու ե զբոխային բոցեր արձակելու, ուրոնց հանդէպ մարդ կըստիպուի ակամայ աչքերը ու ականջները գոցել:

Պ. Շահրիման իր ըսածներու ճշմարտութիւնը ապացուցանելու համար, ի՞նչ հարկ կար Ձեզի անուանարկիչ ջանալ անձնական գրածու հաշիւներ մէջ բերելով: Իր այս ընթացքով ինքզինքը բարձրացուցած թէ ցածրացած կը

նկատե այժմ :

Մինչև իսկ ենթադրելով որ թերթերնուդ գոյութեան (*) պատճառը երբեմն ինք եղած ըլլար իր չքնաղ (**) աշխատակցութիւններով կուզեմ գիտնալ թէ ուրիշի մը եղած բարիքը յիշելը որո՞ւ գործ է :

Հմանապէս ազգ. թերթի մը վարիչ ըլլալնիդ խենթ բազդի մը վերագրել. ի՞նչ մեծանձնութիւն : Արդեօք ի՞ր Ազգ. վարժարաններու անօրէն հռչակուելը խելօ՞ք բազդի մը թէ իր ձեռքը ունեցած զօրաւոր տոքիւմաններու հետեւանք նկատելու ենք :

Պ. Ծահրիման ձեր ուղեղը եազմածիինն կը նմանցնէ ու թերեւս իրենը աշխարհահռչակ քաղաքագէտի մը, փիլիսոփայի մը, որքա՞ն յաւակնոտութիւն : Խմբագրի մը ատենօք պատուաւոր կերպով եալմայի վաճառական ըլլալը իր մը տաւորական կարողութեան հետ ի՞նչ կապակցութիւն ունի, արդեօք Պ. Ծահրիման ինքն ալ իր կեանքին մէջ չունեցաւ պարազանք որոնց մէջ եազմածիի աշակերտել իսկ մտաբերեց ու չի յաջողեցաւ. ուրե՛մն, թող խոնարհի, զի՛նքն քիչ մը այդ մահկանացուն, իր անցեալին վրայ անգամ մը աչք նետելու, երբ դեռ ուրիշներու բերին հոտը մտիկ կընէր, երբ անոնց տրամադրութեան տակ էր երբ անոնց ուղեղը կառավարողէր զինքը, թող լսէ՛ թէ եազմածիին ուղեղը ո՞րկէ կը ճանչնայ :

Վերջապէս չեմ ուզեր ասանկ անկարեւոր խնդիրներու վրայ երկար խօսիլ, ժողովուրդին կը թողում ձեր երկուքին մէջ եղած բարոյականի մեծ, խիստ մեծ անջրպետը նկատողութեան առնել : Մէկ խօսքով, Տէ՛ր խմբագիր, կը փափաքեմ որ թերթերնուդ արժանիքը ու պատիւը պահպանելու համար խօսիլ անգամ չը փորձէք Ձեզի գէ՛մ եղած ասանկ անպատկառ ու սինլքոր ակնարկութեան մը :

Հակապարծոնկ

ԿԱՐՃ ՀԵՐԲՈՒՄ ՄԸ

Ծահրիմանի նման ստոր հայհոյիչի մը որոշած էինք մեր կողմէն պատասխանելու չզիջանել, սակայն այս անգամ ստիպուեցանք անոր հրապարակ նետած մի քանի ըստոր սուտերը սա քանի մը տողով մերկապարանոց ընել :

1.) Ծահրիմանը ճիւղաղային սուտ մը կը գլորէ, ըսելով թէ իրեն յօդուածներ կը տօնինք եղբոր սրբագրելու : Մինչդեռ իրաւ-

(*) Պ. Ծահրիմանի հետերնիդ ունեցած կապակցութեան խզումէն կամ ըստ իր ասուածեան Ձեզի երեսանկետ լքանումէն ի վեր, արդեօք ի՞նչ գերբնական ու սներեւոյթ մատ մտած է թերթերնուդ մէջ, քանի որ ամենայն կարգապահութեամբ զայն հրատարակելէ չէ՞ք զսղրած ցարդ :

ռնքի խմբագրութիւնը բնաւ օրմը պէտք չէ ունեցած ու է յօդուած մը մէկի մը սրբագրել տալու, հետեւաբար չի պիտի գտնուի մէկը այդ տեսակ սուտի մը արձագանգ ըլլալու համար :

2.) Ծահրիման հպարտութեամբ կուզէ ցոյց տալ թէ ինքը «իրաւունքի աշխատակիցը եղած է : Անցեալ տարի թերթիս մէջ քանի մը յօդուած գրած է, բայց ի՞նչ պայմաններու տակ. բացատրենք :

Ինք Ռուսճուգէն բոկոտն ու մերկ երբ վառնա հասաւ, մեզ գիմեց և թախանձանօք խնդրեց թէ զինքը անօթութենէ ու մերկութենէ ազատելու համար աշխատինք իրեն դաստառական պաշտօն մը գտնել. և գործը դուրացնելու ու ինք զինք հանրութեան ներկայացնելու համար առաջարկեց թերթին մէջ քանի մը յօդուածներ գրել ու ամբողջ ստորագրութեամբը երեւալ. մենք արգահատելով իր խեղճութեանը վրայ հիւրասիրեցինք իր քանի մը յօդուածները խոշոր ստորագրութեամբը, մինչդեռ ինչպէս յայտնի է, մենք սովորութիւն չունինք յօդուածներու տակ յայտնի ստորագրել, որովհետեւ «իրաւունք»ի խմբագիրները ու աշխատակիցները բնաւ պէտք չունին իրենց անձին համար ռեկլամներ ընելու :

3.) Մեր բարեխօսութեանց վերայ յեղով էր որ թէ Ծումլայի և թէ վառնայի Հոգաբարձուները զինքը պաշտօնի կոչեցին : Բայց այս Հոգաբարձուներէն և ոչ մին չէ կարող ըսել թէ անկէ ի վեր իր մասին մենք ու է չարաբաշխութիւն մը ըրած ենք :

4.) Մենք զինքը զրպարտելու բնաւ պէտք չունինք. մեր կողմէ եղած թող չի կարծէ իր շուրջը պտտող աննպաստ տարածախու թիւնները, տարածախու թիւններ, որք ուղղակի իր լիբր ու անպատկառ ընթացքին հետեւանք կըրնան ըլլալ :

Անցեալ տարի իր նօթութեան ու մերկութեան վրայ արգահատեցանք, իսկ այս տարի իր մտքի ու բարոյականի անանկութեանը վրայ կ'արգահատինք :

Խմբ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգ. վարժարանի շինութենէն մնացորդ 2227 լէվ պահանջին համար (բացի դատարանի ծախքերէն) Ատաղճավաճառ Ահմէտ-Պիճան դատարանի դիմած է. և յիշեալ գումարի վերջնականապէս գանձման համար Տիպէք Չէշմէի գէ՛մ գտնուած ազգ. գետինը սէքվէսթրօ ըրած է, որ ի մօտոյ ըստ օրինի աճուրդի հանուելով պիտի ծախուի :

Ազգին այս սեփականութիւնն ի զուր ձեռքէ չի հանելու և այս դոյզն գումարին համար օտար-

ներու առջեւ ամօթով չի մնալու նպատակաւ մասնախուժ մը կարգուած է ու յառաջիկայ շաբթու հանգանակութեան պիտի ձեռնարկէ :

Ուստի կը խնդրուի բարեպաշտ ազգայիններէն որ հաճին ազգասիրաբար իրենց սրտէն բխած գումարը նուիրել յանուն Ազգ. արժանապատուութեան :

Մնամ աղօթարար

Նախագահ Յանձնախմբի

Սարգիս ֆիյ. Ղարիպեան

23 յուլիս 99

Վառնա

Լ Բ Ա Ք Ա Ղ

○.○.○

Պոլսոյ թերթերուն մէջ ցաւօք կը կարգանք թէ Ամենապատիւ Տ. Գրիգորիս եպիս. Ալէաճեան՝ որ կիլիկիոյ կաթողիկոս ընտրուած էր, բաւական ծանր հիւանդութեամբ մը կը տառապի Բուժէլի Հիւարի մէջ ուր գացած էր օգու. փոխութեան համար : Նորին Սըրբազնութիւնը կը դարմանուի տք. խորասանճեանէ և ուրիշ երկու հայ բժիշկներէ :

—Մեր Պատրիարքարանի կողմէն փոխանորդ հայրն և Բարկէն վարդապետ շնորհաւորական այցելութիւն տուած են Հայ-Հռոմէա. կանաց նորընտիր Պատրիարքին որ շատ սիրալիբ ընդունելութիւն ըրած է և յայտարարած է թէ՛ իր գլխաւոր ջանքը պիտի ըլլայ սերտ յարաբերութիւններ մշակել և հաւասար ջանքերով օգնել կարօտեալներու և չքաւորներու :

Սիրելի է մեզ յուսալ թէ Պօղոս Պատրիարք երկու հայ հասարակութեան միջեւ իր նախորդին Ազգարեանի աւերածները կանգնէ ու բաժանող թումերը յարգէ :

—Տօքթ. Վահրամ Թորքոմեան Յռանսայի Բժշկական Ակադեմիայի յուլիս 25ի նիստին մէջ կարգացրէ և ուսումնասիրութիւն մը ԺԲ. դարու նշանաւոր հայ բժիշկ Միլիթար Հեւացիի վրայ և հա. կիրճ վերլուծութիւնը ըրեր Հերագիի «Ջերմանց միլիթարութիւն» անուն երկասիրութեան. զոր ամբողջովին Ֆրանսերէն թարգմանել խոստացեր է : Տօքթ. Թորքոմեան որ առաջին հայ բժիշկը կըլլայ Ֆրանսայի Բժշկական Ակադեմիային մէջ խօսող, 3/4 ժամու չափ բե. մը զրաւեր է ու իր բանախօսութիւնները ծափահարութիւններով ընդունուեր են :

Բարիքի բժշկական թերթերը շատ զովեստով խօսած են Ա.Բ. դարու նշանաւոր հայ բժիշկ Միլիթար Հեւացիի մասին : «Պիւլլեթէն Մէտիքալ» հետեւեալ խորհրդածութիւնները ըրած է.

«Տօքթ. Թորքոմեանի աշխատասիրութիւնը շատ կարեւոր է սա տեսակետով որ նոր էջ մը կաւելցնէ Ասիոյ բժշկական հին պատմութեան մէջ. եւ արդարեւ, առաջին անգամ է որ կը

կարգացուի բժշկական տարեգրութեանց մէջ անունը հայ բժիշկի մը որ շնորհիւ իր արուեստին, իր գիտութեան եւ իր բազմաթիւ աշխատութեանց՝ մեծապէս սատարած է իր ժամանակին բժշկական յառաջգիտութեան բարեշրջութեանը, ինչպէս կը հաստատեն Վիքթօր Լանկլուա, Էտուառ, Տիլօրիէ եւ Ալիշան :»

—Չատկի և Ծնունդի տօններուն առթիւ կառավարութենէն Ազգ. Պատրիարքարանի յատկացուած գումական նպաստին մէջ մասը 10000 զրշ. դեռ չաբաթ օր յանձնուեր է մալիյէի կողմէ Պատրիարքարանի : Ի՞նչ փութկոտութիւն :

—Եւգրիկոյ առաջ. փոխանորդը քաղաքին մէջ պատահած հրդեհին վրայ տեղեկութիւններ հաղորդելով Պատրիարքարան, տեղւոյն ազգայիններուն նիւթական կարօտ վիճակը յայտնած և անմիջական օգնութիւն խնդրած է :

—Պուրկաղի Ազգ. վարժարանի Հոգաբարձութեան կնիքով և 13 ստորագրութեամբ նամակ մը ընդունեցինք : Ստորագրողներուն և ոչ մին իր ստորագրութիւնը ուղիղ գրելու չափ կարողութիւն ցոյց չէր տուած. իսկ նամակի պարունակութիւնը աւելի այլանշան էր : Այդ մարդիկը Պուրկաղի մէջ անցեալ շաբթու տեղի ունեցած մատնութեան մասին Ունճեանը չքմեղել փորձելով կը խոստովանին թէ մատնութիւն ընողները իրենք են : Այս խոստովանութեան հանդէպ մեզ կը մնայ անոնց ըսել միայն. — երեսնիդ ձերմակ մնայ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աղջկանց կրթարանի խնամակալութիւնը այսօր կուգայ յայտարարել թէ, կրթարանի Ուսանողաց վիճակացոյցներու բաշխման հանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի, 26 յուլիս 99, Հաճի Բանագօի դիմաց «ԿՐՕՁԴԻ» զբօսարանին մէջ կէս օրէն յետոյ ժամը 2ին :

ՄԻԼԼԵԹԻՆ ՊՕՐՃՈՒ

Շէհրիմիդին Ազգ. վարժարանը եաբըլմասընտան տօլայը Եկեղեցի 110 նաբօլէօն գատար պօրճ ալթընա կիրմիշ օլտըղը պիւթիւն վարնատա սաքին միլլէթտաչաւը մըզա մալիւմ տըր. քիլիսէնին պօրճու միլլէթէ այիտ օլտըղը թարիֆէ հաճէթ եօգ տըր :

Կէշէն հաֆիւմ եազմըշ օլտըղը մըզ իւզրէ ալաճագլը օլան Ահմէտ Պիճան էֆ. հիւքիւմէթէ միւրաճաթ իթմիշ օլտըղէ մահքէմէ մալիթէթի իլէ ալաճագլընը թալէպ իթմէքտէ տիր. պէլքի տէ պու ալ խիթամընտա իճրա մէ. մուրը վասըլթասը իլէ միլլէթին արսա վէ եալսօտ էմլաքընը սաթտըմայա Գէշէպպիւս իտէճէք տիր. պու պապտէ իսթիֆա իթմիշ օլան թաղ. խորհուղդ ազա.

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войниковъ